# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

**Հասցեատեր՝**

Աչաջրի գյուղապետարան

Էլեկտրոնային փոստի հասցե՝ faachajur.armen13@mail.ru

**«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության**

**Կարգապահական և էթիկայի կոմիտեի**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**13.02.2024թ.**

| | |
|---|---|
| Նախագահ | Կարեն Հովհաննիսյան |
| Անդամներ | Դավիթ Բակլաչյան |
| | Արփի Լազարյան |
| | Նարեկ Ադամյան |
| | Հենրիկ Խաչատրյան |

---

| | |
|---|---|
| **Վարույթ՝** | 15Գ-016 |
| **Խախտում՝** | 1. «Աչաջուր-09» թիմի կողմից խաղի ժամանակահատվածում մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելը (Հավելված 1 Ե, 22-րդ կետ)<br>2. «Աչաջուր-09» թիմի ֆուտբոլիստ Մելսիկ Ալավերդյանի (36683) կողմից պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելը (Հավելված Զ, 17-րդ կետ)<br>3. «Աչաջուր-09» թիմի ֆուտբոլիստ Շահեն Խառատյան (40379) կողմից պաշտոնատար անձանց հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելը (Հավելված Զ, 17-րդ կետ) |
| **Առաջնություն՝** | ՀՀ ֆուտբոլի 2023-2024թթ. մինչև 15տ. Գավաթի խաղարկություն |
| **Խաղ՝** | «Աչաջուր-09» - «Շիրակ-09-1», 11.11.2023թ. |

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Աչաջրի գյուղապետարանին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 13-րդ հոդվածի 14-րդ կետը և 21-րդ կետը՝ ֆուտբոլիստ Մելսիկ Ալավերդյանին (36683) որակազրկել 3 (երեք) խաղով:

Որակազրկումը տարածվում է 2023 թվականի նոյեմբերի 11-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։ Որակազրկումը ֆուտբոլիստին զրկում է նաև ՀՖՖ հովանու ներքո անցկացվող այլ մրցումներին մասնակցության իրավունքից։

3. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023թ. խմբագրություն) 13-րդ հոդվածի 14-րդ կետը և 21-րդ կետը՝ ֆուտբոլիստ Շահեն Խառատյանին (40379) որակազրկել 3 (երեք) խաղով։
   Որակազրկումը տարածվում է 2023 թվականի նոյեմբերի 11-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։ Որակազրկումը ֆուտբոլիստին զրկում է նաև ՀՖՖ հովանու ներքո անցկացվող այլ մրցումներին մասնակցության իրավունքից։

**ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝**

**Կարեն Հովհաննիսյան**

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։